ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Մեր իշխանությունները մարտական ուղի անցած տղաներին, ովքեր իրենց վստահում ու հավատում են, պիտի տեղ տան և աչքի լույսի պես պահեն

Գնել (Գագո) Գեյբանի Մանուկյանը ծնվել է 1960թ., Մասիսի շրջանի Մարմարաշեն գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում, այնուհետ ընդունվել և ավարտել է Կրասնոդարի մարզի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենա և տեխնոլոգիա բաժինը: 1981-89թթ. աշխատել է «Հարավտրանստեխմոնտաժ» տրեստում երկրորդ բաժնի ինժեներ: 1989-ին կազմավորել և ղեկավարել է Հայաստանի տարածքում գտնվող Զորավար Անդրանիկի անվամբ ինքնապաշտպանական ջոկատներ: Մասնակցել է Երասխավանի, Տավուշի, Կրասնոսելսկի, Իջևանի պաշտպանական մարտերին: Մասնակցել է նաև Արցախի ազգային ազատագրական պայքարին՝ ընկերների հետ սխրանքներ է գործել Լաչինի, Խոջալուի, Շահումյանի, Վաղուհասի, Կուբաթլուի, Ղչաղ Սարի գրավման և շրջակա տարածքների ազատագրական, մարտական գործողությունների ժամանակ: 1992-93թթ. ծառայել է թիվ 77382 զ/մ-ում նշանակվելով հրամանատար: 1993-94թթ. ծառայել է որպես 83-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի հրամանատարի տեղակալ: 1992-ին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, իսկ 1995թ.՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: 1994-ին ստացել է փոխգնդապետի զինվորական կոչում: 1996թ. նշանակվել է Արարատի մարզի Մասիսի զինվորական կոմիսար, 1997-ին՝ ՊՆ Վանաձորի թիվ 21833 ուսումնական գնդի հրամանատար, 2001-02 թթ.՝ ՀՀ ԱԻՎ կապի և ազդարարման բաժնի պետ, իսկ 2003-ից ՀՀ ՊՆ Արարատի մարզի Մասիսի զինվորական կոմիսարն է: 2006թ. ստացել է գնդապետի զինվորական կոչում: Արժանացել է կառավարական բարձր պարգևների, մեդալների ու պատվոգրերի:

-Պրն Մանուկյան, ինչպե՞ս է ընթանում զարնանային զորակոչը:

-Զորակոչը ընթանում է նորմալ: Խուսափողներ չկան, կան, ուղղակի, չներկայացողներ, որոնց թիվը շատ քիչ է՝ մոտ 8-10, բայց նրանք, հավատացած եմ, անպայման կներկայանան: Ինչ վերաբերում է զորակոչիկների առողջությանը, ապա չէի ասի, որ այդ առումով վիճակը լավ է: Հիմնականում մութ ու ցուրտ տարիների ծնունդներ են, նրանց մոտ կան հիվանդություններ: Հիվանդության առկայության դեպքում ուղարկում ենք բուժման, իսկ անհրաժեշտության դեպքում կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից տարկետում է տրվում: Այս հարցին գեներալ Չալյանը շատ լուրջ և խիստ է վերաբերվում: Ցանկացած զինակոչիկի ծնողի դիմելու դեպքում անձամբ եմ ընդունում, նրանց տալիս իմ իրավասությունների մեջ գտնվող պատասխան: Զորակոչից հետո սերտ է կապը զինվորի հետ: Հաճախ զորամասի հրամանատարներից հետաքրքրվում եմ մեր տարածքից ծառայող զինվորների մասին: Ներկայումս Մասիսի քաղաքապետի, միլպետի, գյուղապետերի հետ համատեղ մեծ ակցիա ենք կազմակերպում: Նպատակն է այցելել ԼՂՀ այն զորամասեր, որտեղ մեր շրջանից մեծ թվով զինվորներ կան ծառայող: Այցելության ընթացքում զորամասերին նվիրելու ենք հեռուստացույց և DVD : Ոչ միայն զորակոչից հետո ենք կապը պահպանում և հետևողական լինում, այլև ծառայությունից հետո ենք ձեռք մեկնում և օգնում տղաներին աշխատանք ունենալու, ամուսնության և այլ հարցերում: Չէ՞ որ բոլորն էլ մեր երեխաներն են: Մեր սերունդը այս երիտասարդ սերնդից մեծ ակնկալիքներ ունի, որովհետև երիտասարդները այսօր պատրաստ են ամեն ինչի: Մեր հայրերը հայկական քոչարին Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրը պարել են Ռայխստագում, մենք պարել ենք Շուշիում, գալիք սերնդի հետ պատրաստ ենք պարելու նաեւ Մասիս լեռան լանջին: Հույսներս չենք կտրում, այդ օրը գալու է, մեր առջև հայ դատի խնդիր ունենք...

-Դուք մարտական փառապանծ ուղի եք անցել եւ Ձեր սիրտն, ինչպես ասում են, այնտեղ է հայրենիքի սահմանների պաշտպանության դիրքերում. Ուստի եւ, Ձեզ այստեղ՝ զինկոմիսարիատի պատերի ներքո, նեղված ու անհարմար չե՞ք զգում:

-Ասեմ, որ իմ տեղն այստեղ չէ՝ զորքերում է: Եթե տանեն, կգնամ զորքերում ծառայելու: Ես զինվորին տալու շատ բան ունեմ և դրան պատրաստ եմ: Ես այս ուղղությամբ առաջարկ արել եմ, ինչը հիմա քննարկման է դրված: Ես ավելի շատ պետք եմ մեր բանակի կադրեր պատրաստելու գործընթացին: Ես հոգով ու սրտով հրամանատար եմ: Մեկ այլ առաջարկությամբ էլ եմ հանդես եկել Երասխ-Եղեգնաձոր հատվածը հատկացնեն մեր ջոկատին, պայմանագրայիններով պահենք սահմանի առաջին գիծը: Ըստ իս, մարտական գործողությունների մասնակիցներս ավելի մեծ փորձ ունենք և ամեն ինչի տիրապետում ենք: Գիտենք և զենքն օգտագործելու, և զինամթերքը խնայելու ճիշտ ձևերը, ունենք սառը դատողություն, ինչն ամբողջությամբ կփոխանցվի զինվորին: Այսօր ազատամարտին մասնակցած տղաները պատրաստ են պայմանագրային գումարտակներում ընդգրկվելու, բայց առանց տարիքային սահմանափակման: Թեև տարիքը չի համապատասխանում, բայց ունեցած փորձը շատ մեծ է, պետք է օգտագործել դա եւ աստիճանաբար գնալ սերնդափոխության: Ամեն դեպքում, ժամանակավոր զինադադարը խաբուսիկ է: Մեր իշխանությունները մարտական ուղի անցած տղաներին, ովքեր իրենց վստահում ու հավատում են, պիտի տեղ տան և աչքի լույսի պես պահեն: Պատերազմի դեպքում այդ տղաներն են առաջինը մարտի գնալու: Որպես հրամանատար, ես շատ շնորհակալ եմ երկրի նախագահ Ս.Սարգսյանից և պաշտպանության նախարար Ս.Օհանյանից, այն բանի համար, որ հաշմանդամները նախկին 3-4 հազար դրամի փոխարեն այսօր ստանում են 60-80 հազար դրամ թոշակ: Այսօր ազատամարտիկի նկատմամբ մոտեցումը շատ բարձր է: Մեր նախագահը մարտական ուղի անցած մարդ է և շատ լավ հասկանում է զինվորի հոգեբանությունը: Չեռք են մեկնում եւ օգնում են շատ ու շատ հարցերում: Ճիշտ է, միջոցառումներին շատերին չեն հրավիրում, ինչը, կարծում եմ, սխալ է. պետք է առաջին շարքերում ազատամարտիկները նստած լինեն, չէ՞ որ խաղաղությունը ձեռք ենք բերել նրանց արյան գնով: Պետք է անպայման հաշվի առնել սա:

-Տեղյակ ենք, որ առանձնակի հոգատար ու սրտացավ եք ձեր մարտական ընկերների, զինակիցների նկատմամբ: Կոնկրետ ինչո՞վ է դա արտահայտվում:

- Ես իմ ջոկատի տղաների կողքին եմ եղել թե պատերազմի դաշտում և թե հիմա: Բոլորի հետ կապը կա, տեղյակ եմ և մշտապես հետաքրքրվում եմ նրանցով: Ո՞վ է հրամանատարն առանց զինվորի, պատերազմից հետո բոլորս էլ ընկերներ ենք: Ընկերներս իմ ջոկատի տղաներն են միայն: Որպես հրամանատար, մշտապես օգնում եմ նրանց ցանկացած հարցում: Այս տարի մոտ 30-40 հազար դոլարի օգնություն ենք տվել: Մեծ քանակությամբ բանջարեղենի սերմեր և հագուստ ենք բաժանել ազատամարտիկների ընտանիքներին: Պահում էի նաև ծերերի համար նախատեսված բարեգործական ճաշարան, որը ճգնաժամի հետ կապված ժամանակավոր փակվել է: Այս ամենը անում եմ ընկերներիս հետ համատեղ: Որպես 33 ջոկատների հրամանատարական խորհրդի նախագահող, հաճախ պարգևատրման եմ ներկայացնում մինչև վերջին պահը պատերազմի դաշտում եղած այն ազատամարտիկներին, ովքեր առհասարակ չեն պարգևատրվել:

**Նշենք, որ զինկոմիսարիատում ականատեսը եղանք տարբեր ջոկատների 90 անդամների պարգևների հանձնմանը: Նրանք պարգևատրվեցին «Դաստանամատ Կանայան», «Վազգեն Սարգսյան» և «Ծովակալ Իսակով» մեդալներով: Այդտեղ էր նաև զինկոմիսարի մարտական ընկեր Արմեն Մանուկյանը, ով եկել էր Գ.Մանուկյանի ծննդյան տարեդարձը շնորհավորելու: Առիթից օգտվելով, ուզեցինք, որ Ա.Մանուկյանը ներկայացնի, թե ինչպիսի մարդ ու ընկեր է իրենց հրամանատարը: Նա մասնավորապես ասաց. *«Մեր հրամանատարը կռվի դաշտ դուրս գալուց առաջ ամեն մեկին առանձին-առանձին մոտենում էր, հույս տալիս և ոգեշնչում: Իսկ պատերազմի ժամանակ ոչ մեկի դին չի թողել և ամեն գնով հանել է կռվի դաշտից, ինչը չէր արվում հակառակորդի կողմից: Նրա ամենակարևոր հատկանիշներից են ազնվությունը, վճռականությունը, զգուշավորությունը: Ոչ թե չափից ավելի, այլ ճիշտ զգուշավորություն է ցուցաբերել, ինչի շնորհիվ այդքան քիչ զոհեր էին լինում և գերի չէին մնում մեր տղաները: Շատ արագ կողմնորոշվելու և վճռական լինելու մեծ ունակություն ունի, ցանկացած հարցի շուրջ կարող է ճիշտ հաշվարկ անել: Ամենամեծ հատկանիշն այն է, որ բոլորի կողքին է կանգնած: Պատահական չէ, որ մեր հրամանատարը հեղինակություն է վայելում շատ- շատերի կողմից...»:*

Ռուզաննա Մանուկյան

«Ընկեր»-ի կողմից.- Մեր խմբագրակազմը եւս շնորհավորում է գնդապետ Մանուկյանին՝ ծննդյան 49-րդ տարեդարձի կապակցությամբ, ցանկանում ուժ և կորով, մեծ եռանդ, երկար տարիների կյանք և խաղաղ ծառայություն...